




Բնությունամանիս Կանաչ բառարան



Շրջակա միջավայրի մասին իրազեկվածությունը բարձրացնող խմբային այս խաղը հնարավորություն կտա քեզ և քո ընկերներին հետաքրքիր ժամանակ անցկացնել և ստանալ նոր ու կարևոր գիտելիքներ մեր շրջակա միջավայրի մասին:
Խաղի ընթացքում առաջացող անհասկանալի հարցերի պատասխանները կարող ես գտնել այս «Կանաչ» բառարանում:

Բովանդակալից ու հաճելի ժամանց բոլորիդ:



Տերև

- **Ազգային պարկը** հատուկ օրենքով պահպանվող տարածք է:
- **Աղտոտվածությունը** վնասակար նյութերի ներթափանցումն է շրջակա միջավայր:
- **Այլընտրանքային էներգիան** այն էներգիան է, որը չի արտադրվում հանածո վառելիքից և չի առաջացնում ջեմոցային գազեր:
- **Արագ նորաձևությունը** ցածր գներով հագուստի զանգվածային արտադրությունն է, որը հանգեցնում է սպառման բարձր մակարդակի:
- **Բնական ռեսուրսները** երկրի բնակչության պահանջմունքների բավարարման համար օգտատործվող ռեսուրսներն են:
- **Բնապահպանական աղետը** շրջակա միջավայրում տեղի ունեցող անդառնալի փոփոխություն է:
- **Բնապահպանական իրավունքը** բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հարաբերությունների իրավական կարգավորումն է:
- **Գենետիկորեն մոդիֆիկացված օրգանիզմն (ԳՄՕ)** այն օրգանիզմն է, որի գենոտիպն արհեստականորեն փոփոխվել է գենային ինժեներիայի մեթոդներով:
- **Գերբնակեցումը** բնակչության անկառավարելի աճն է այն միջավայրում, որտեղ գտնվում է այդ բնակչությունը:
- **Գծային տնտեսությունը** տնտեսության վարման ձև է հիմնված «ձեռքբերում, օգտագործում, դեն նետում» սկզբունքի վրա:
- **Երաշտը** օդի բարձր ջերմաստիճանի, ցածր հարաբերական խոնավության պայմաններում տեղումների երկարատև անբավարարությունն է:

- **Երկրորդ արդյունաբերական հեղափոխությունը** (տեխնոլոգիական հեղափոխություն) 19-րդ դարի վերջից 20-րդ դարի սկիզբն ընկած հատվածն է՝ արագ գիտական հայտնագործություններ, զանգվածային արտադրություն, արդյունաբերականացում:
- **Զրո թափոնը** գործունեության տեսակ է, երբ մարդիկ, կամ կազմակերպությունները նվազագույնի են հասցնում իրենց կողմից թափոնների առաջացումը:
- **Էլեկտրամագնիսական ալիքները** լիցքավորված մասնիկների ստեղծած էլեկտրական և մագնիսական դաշտերի պարբերական տատանումներն են:
- **Էկոլոգիապես մաքուր ապրելակերպը** շրջակա միջավայրին նվազագույն վնասներ հասցնող ապրելակերպ է:
- **Էկոհամակարգը** մեկ միասնական ֆունկցիոնալ ամբողջության մեջ միավորված կենդանի օրգանիզմների և նրանց ապրելու միջավայրի համակեցությունն է:
- **Թափոնների կառավարումը** թափոնների հավաքմանը, փոխադրմանը, վերամշակմանն ու երկրորդային օգտագործմանն ուղղված գործընթաց է:
- **Թափոնների տեսակավորումը** թափոններն առանձնացնելու գործընթաց է:
- **Թթվային անձրևները** մթնոլորտում արդյունաբերական արտանետումների և խոնավության փոխազդեցության հետևանքով առաջացած թթվային տեղումներ են:
- **Թունավոր տարրերը** տարրերի խումբ են, որոնք օրգանիզմում կարող են առաջացնել թունավորում:
- **Ծովի մակարդակի բարձրացումը** համաշխարհային օվկիանոսի/ գետերի մակարդակի բարձրացումն է, որը կարող է առաջանալ օրինակ երկրի ջերմաստիճանի բարձրացման պատճառով:
- **Կալիֆորնիական որդը** որդերի այն տեսակն է, որը ավելի լավ է վերածում սննդային մնացորդները կենսահումուսի:

- **Կայուն զարգացումը** բավարարում է ներկա սերունդների բնական ռեսուրսների հանդեպ պահանջմունքները առանց վտանգի տակ դնելու ապագա սերունդների պահանջմունքները բավարարելու իրավունքը:
- **Կայուն նորաձևությունը** (Էկոնորաձևություն) Էկոլոգիապես մաքուր միջոցների օգտագործմամբ նորաձև հագուստների պատրաստումն է:
- **Կանաչ շարժումը** բնապահպանական շարժում է՝ ուղղված շրջակա միջավայրի պաշտպանությանը:
- **Կենսավտանգավոր թափոնները** այն թափոններն են, որոնք կենսաբանական հատկություններով վտանգ են ստեղծում կամ կարող են ստեղծել մարդու առողջության կամ շրջակա միջավայրի համար:
- **Կենսաքայքայվող պլաստիկը** պլաստիկի այն տեսակն է, որը կարող է սպառվել միկրոօրգանիզմների կողմից և քայքայվել:
- **Կլիմայի փոփոխությունը** ամբողջ երկրագնդում կամ առանձին գոտիներում տեղի ունեցող կլիմայական փոփոխությունն է:
- **Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը** մասնավոր կամ պետական ոլորտում գործող ցանկացած առևտրային և այլ կազմակերպության նվիրումն է այն հասարակությանը, որում գործում է այդ կազմակերպությունը:
- **Հեղուկ թափոնները** արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերն են:
- **Հիդրոէլեկտրակայանը** էլեկտրակայանի տեսակ է, որտեղ ջրի հոսքի փոխակերպվում է էլեկտրական էներգիայի:
- **Հումուսը** հողի օրգանական, մուգ գունավորված մաս է՝ ձևավորված բուսական և կենդանական մնացորդների փոփոխությունից:
- **Մեթան գազը** (ճահճագազ, հանքագազ) անգույն, անհոտ գազ է: Առաջանում է օրգանական նյութերի նեխումից:
- **Նավթի արտահոսքը** բնապահպանական աղետ է, որի ժամանակ նավթը հայտնվում է ջրային կամ այլ օբյեկտների մակերևույթին:

- **Շրջանաձև տնտեսությունը** ռեսուրսների օգտագործման համակարգ է, որտեղ գերակայում է ռեսուրսների կրճատումը, վերամշակումը և վերօգտագործումը:
- **Որդերի սրճարանը** կոմպոտացման մի տեսակ է, որտեղ օգտագործվում են որդեր՝ որպես սննդի արագ վերամշակողներ:
- **Ուլտրամանուշակագույն ճառագայթներն** անտեսանելի էլեկտրամագնիսական ալիքներ են, որոնք ազդում են մարդու առողջության վրա:
- **Պատասխանատու սպառումը** սպառման տարբերակ է, որը հաշվի է առնում կայուն զարգացման հիմքերը:
- **Զերմոցային էֆեկտը** մարդու տնտեսական գործունեության հետևանքով պայմանավորված Երկրի ջերմաստիճանի բարձրացումն է (օդի միջին ջերմաստիճանի փոփոխություն):
- **Ռադիոակտիվ թափոնները** ռադիոկապտիվ նյութեր են, որոնք չեն նախատեսվում օգտագործել այլ նպատակով և ենթակա են կենսոլորտից մեկուսացման:
- **Սառցաշերտի հալումն** այն գործընթացն է, երբ սառցադաշտերի հալումն ավելի արագ է տեղի ունենում, քան նոր սեզոնային ձյան կամ սառույցի կուտակումը:
- **Սինտեպոնը** (պոլիէթիլենային բամբակ) ջերմային եղանակով ամրացված սինթետիկ մանրաթելերից պատրաստված ոչ հյուսված գործվածք է:
- **Տիեզերքի աղտոտվածությունը** տիեզերք ուղարկված սարքավորումների կամ դրանց բեկորների արդյունքում առաջացած աղտոտվածությունն է:
- **Տոֆուն** չեզոք համ ունեցող սպիտակուցով հարուստ սննդամթերք է:
- **Օրգանական գյուղատնտեսությունը** գյուղատնտեսության վարման համակարգ է՝ հիմնված օրգանական պարարտանյութերի (գոմաղբ, կոմպոստ և այլն) և հողի նվազագույն մշակման համակարգերի վրա:



Մոլորակ

- **Ածխաթթու գազը (CO2)** ածխածնի երկօքսիդն է՝ ածխածնի և օրգանական միացությունների այրման վերջնական արդյունքը:
- **Աղբավայրը** արտադրության և կենցաղային թափոնների կուտակման տարածք է:
- **Այգին** մարդու կողմից աճեցված պտղատու ծառերով և թփերով տարածք է:
- **Անտառահատումը** ծառերի հատման և անտառից դուրսբերման գործընթաց է:
- **Ապակե շիշը** ապակուց պատրաստված շիշ է:
- **Արևային մարտկոցները** մի շարք ֆոտոէլեկտրական էլեմենտների միասնությամբ արևային էներգիան անմիջականորեն էլեկտրականի փոխակերպող սարքեր են:
- **Բազմակի օգտագործման տոպրակն** այն տոպրակն է, որը հնարավոր է օգտագործել մեկից ավելի անգամ:
- **Բնությունը** մարդուն շրջապատող այն ֆիզիկական միջավայրն է, որը ստեղծված չէ մարդու կողմից:
- **Բուսակերը** այն կենդանի օրգանիզմն է, որը մասնակիորեն հրաժարվում է կենդանական ծագման մթերքներից (միս, ծովամթերք):
- **Գազը** նյութի չորս ագրեգատային վիճակներից մեկն է:
- **Գլոբալ տաքացումը** երկրի կլիմայական համակարգի միջին ջերմաստիճանի բարձրացումն է:
- **Երկիր մոլորակը** մարդկության և միլիոնավոր կենդանատեսակների և բուսատեսակների հայրենիքն է:
- **Երկրի ժամը** միջազգային միջոցառում է, որ խնդրում և քաջալերում է մարդկանց, համայնքներին և կազմակերպություններին, որ իրենց լույսերը և ոչ հիմնարար էլեկտրական հարմարանքները մարեն մեկ ժամով:

- **Ընտանի կենդանիները** մարդու կողմից ընտանի դարձված կենդանիներն են, որոնց նա խնամում է՝ տալով ապաստան և կեր:
- **Թթվածինը** անգույն ռեակիվ գազ է՝ օդի կենսապահովման բաղադրիչ:
- **Թղթ տոպրակը** թղթից պատրաստված տոպրակ է:
- **Թունավոր պարարտանյութերը** թունավորում առաջացնող նյութեր են բույսերը միջատներից պաշտպանելու համար:
- **Թռչնադիտումը** ներառում է անզեն աչքով կամ հեռադիտակով թռչուններին ուսումնասիրելը:
- **Կարմիր գիրքը** հազվագյուտ և ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանիների, բույսերի և սնկերի ցանկ է:
- **Կեղտաջրերը** տարբեր նպատակներով օգտագործված ջրի և թափոնների խառնուրդ են:
- **Կեղտոտ անձեռոցիկը** աղտոտված թղթի կտոր է:
- **Կենսաբանն** անձ է, ով ուսումնասիրում է կենդանի օրգանիզմները, ներառյալ բույսերը և կենդանիները:
- **Կոմպոստացման ամանը** պարարտանյութ ստանալու նպատակով օրգանական թափոնները պահեստավորելու աման է:
- **Հանքարդյունաբերությունը** երկրի ընդերքից օգտակար հանածոներն արդյունահանելու և նախնական մշակման ենթարկելու գործընթացն է:
- **Հողը** երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է գյուղատնտեսական արտադրության հիմնական միջոցը:
- **Հողմաղացը** աերողինամիկական մեխանիզմ է, որը մեխանիկական աշխատանք է կատարում քամու էներգիայի միջոցով:
- **Հողմային էլեկտրակայանը** քամու հոսքի կինետիկ էներգիան էլեկտրականի փոխակերպող տեղակայանք է:

- **Մեկանգամյա օգտագործման պլաստիկ ափսեներ** պլաստիկից պատրաստված ափսե է, որը ենթակա է դեն նետման մեկ անգամ օգտագործելուց հետո:
- **Նավթը** բնական եղանակով հայտնվող, երկրի նստվածքային թաղանթում տարածված, յուղանման, յուրահատուկ հոտով, դյուրավառ հեղուկ է:
- **Պլաստիկ բաժակը** պլաստիկ նյութից պատրաստված բաժակ է: Կան մի քանի անգամ օգտագործման ենթակա և մեկանգամյա օգտագործման պլաստիկ բաժակներ:
- **Ջրի աղտոտվածությունը** ֆիզիկական, քիմիական, կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումը և կուտակումն է բնական ջրերում:
- **Ջրհեղեղը** ցամաքի զգալի տարածքների ժամանակավոր ջրածածկումն է:
- **Սերմը** սաղմնային բույս է՝ իր մեջ կուտակված պաշարային սննդանյութերով:
- **Սննդային շղթան** բնության մեջ կենդանի օրգանիզմների կապն է մեկը մյուսից որպես սննդի հիմնական աղբյուր:
- **Սննդի մնացորդները** սննդամթերքի ավելցուկներն են, որոնք հետագայում կարող են կոմպոստացվել:
- **Ստորգետնյա ջրերը** երկրակեղևի տարբեր խորություններում՝ ապարային կազմավորումների ճեղքվածքներում և ծակոտիներում գտնվող ջրեր են:
- **Ստվարաթղթե տուփը** ստվարաթղթից պատրաստված տուփ է:
- **Վերամշակելը** գործընթաց է, երբ թափոնները վերափոխում են նոր նյութերի և առարկաների:
- **Վերամշակման գործարանը** թափոնները վերամշակելու և դրանց երկրորդ կյանք տվող գործարան է:

- **Վերանորոգումը** գործողություն է, որի ժամանակ կոտրված իրերը վերականգնվում են:
- **Տեսակավորման ամանն** աման է, որտեղ թափոնները տեսակավորվում են խմբերի (օրինակ թուղթ, պլաստիկ, ապակի, մետաղ):
- **Տնային բույսերը** բնակարաններում կամ հասարակական վայրերում մարդկանց կողմից աճեցվող բույսերն են:
- **Օդի աղտոտվածությունը** օդի հիմնական բաղադրիչը չկազմող քիմիական, ֆիզիկական, կենսաբանական նյութերի թափանցումը, առաջացումը և կուտակումն է մթնոլորտում:
- **Օգոնային շերտի ճեղքը** մարդու կենսագործունեության արդյունքում մթնոլորտ որոշակի նյութերի արտանետումների արդյունքում առաջացած ճեղքն է:
- **Օրգանական թափոնները** կենսաբանական տարրալուծման արդյունքում բույսերից և կենդանիներից առաջացած նյութեր են:



Քաղաք

- **Ափսայքլինգը (Upcycling)** թափոնների ստեղծագործ կրկնակի օգտագործման միջոցով նոր նյութերի կամ արտադրանքի ստացումն է:
- **Բժշկական թափոնները** առողջապահական կենտրոններում, ինչպիսիք են՝ հիվանդանոցները, ատամնաբուժական կլինիկաները (օր.՝ ասեղներ, ձեռնոցներ) առաջացող թափոններ են:
- **Դաունսայքլինգը (Downcycling)** թափոնների կառավարման գործընթաց է, երբ վերամշակված նյութը համեմատած սկզբնական նյութի ավելի ցածր որակի և ֆունկցիոնալության է:
- **Էկոլոգիական ոտնահետքը** գործիք է, որով հաշվարկվում է մարդկանց ազդեցությունը բնության վրա:
- **Էկոլոգիան** ուսումնասիրում է կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրի միջև եղած հարաբերությունները:
- **Թիրթեղյա տարան** թիրթեղից պատրաստված տարա է:
- **Թունաքիմիկատը** քիմիական պատրաստուկ է, որն օգտագործվում է վնասատուների, սնկային և վիրուսային հիվանդությունների, մոլախոտերի դեմ պայքարելու համար:
- **Ինկուբացիան** արհեստական եղանակով բնական միջավայրի ստեղծումն է:
- **Լյումինեսցենտային լամպը** լույսի գազապարպման աղբյուր է, որի լուսարձակումը հիմնված է էլեկտրական էներգիայի կրկնակի փոխակերպման վրա:
- **Ծովի մակարդակի բարձրացումը** համաշխարհային օվկիանոսի կամ ծովի մակարդակի բարձրացումն է, օրինակ գլոբալ տաքացման հետևանքով:
- **Կենդանական թափոնները** կենդանիներից առաջացած թափոններն են:

- **Կենսագազը** կենսազանգվածի ջրածնային կամ մեթանային խմորումից ստացված գազ է:
- **Կլիմայի փոփոխությունը** երկրի վրա ամբողջությամբ կամ առանձին գոտիներում տեղի ունեցող կլիմայական փոփոխություններն են:
- **Հալոգեն լամպը** շիկացման լամպի տեսակ է, որտեղ օգտագործվում է հալոգեն գազը էլեկտրական լույս ստանալու համար:
- **Մակաբույծները** այլ օրգանիզմներին օգտագործում են որպես ապրելու և սննդի աղբյուր:
- **Միջուկային աղետի 6-րդ մակարդակը** նախավերջին մակարդակն է, կենդանի օրգանիզմների համար վտանգ ներկայցնող լուրջ պատահար է, որը ուժգնությամբ երկրորդն է:
- **Միջուկային աղետի 7-րդ մակարդակը** միջուկային աղետի վերջին մակարդակն է, կենդանի օրգանիզմների համար վտանգ ներկայցնող խոշորագույն պատահար է, որը ուժեղությամբ առաջինն է:
- **Նվազեցնելը (reduce)** ռեսուրսների սպառման կրճատումն է:
- **Շիկացման լամպը** էլեկտրական լույսի աղբյուր է՝ դժվարահալ մետաղից թելիկի կամ պարույրի ձևով պատրաստված ճառագայթիչով:
- **Որսագողերը** ապօրինի որսով զբաղվող մարդիկ են:
- **Ուղղահայաց հողագործությունն** ուղղահայաց շարված շերտերով մշակաբույսերի աճեցման պրակտիկան է:
- **Պեսկետարիան** այն մարդն է, ով չի ուտում միս, բայց ուտում է ձուկ և ծովամթերք:
- **Ջերմոցային գազերը** այն գազերն են, որոնք կլանելով ինֆրակարմիր ճառագայթումը նպաստում են գլոբալ տաքացանը:
- **Սննդային ցիկլը** շարունակական գործընթաց է, երբ բուսանյութը քայքայվում է՝ հողին տրամադրելով բույսերի աճին աջակցող հարուցիչներ:

- **Վերականգնվող ռեսուրսներն** այն բնական ռեսուրսներ են, որոնք շարունակում են գոյություն ունենալ՝ չնայած սպառվելուն, կամ կարող են համարվել որոշակի ժամանակահատվածում, նույնիսկ երբ դրանք օգտագործվում են:
- **Վերօգտագործել (reuse)** նշանակում է կրկին օգտագործել ապրանքները:
- **Վտանգավոր թափոնները** կարող են վտանգ հասցնել մարդու առողջությանը և շրջակա միջավայրին:
- **Փարիզյան համաձայնագիրը** միջազգային փաստաթուղթ է, որն ընդունվել է Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում՝ ի հավելումն ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջադարձային կոնվենցիային:
- **Փոթորիկը** հանկարծակի, ուժգին, ուղղությունը հաճախ փոխող կարճատև քամի է:
- **«3R»-ը** թափոնների կառավարման սկզբունք է նվազեցման, վերօգտագործման, վերամշակման միջոցով:
- **Cruelty-free պիտակը** կոսմետիկ կամ խնամքի միջոցների վրա փակցվող պիտակ է, որը ցույց է տալիս, որ տվյալ ապրանքը արտադրված կամ մշակված է մեթոդներով, որոնք չեն ենթադրում դաժան վերաբերմունք կենդանիների նկատմամբ:
- **Greenwashing-ը** կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկատվության տրամադրման գործընթաց է ընկերության արտադրանքի էկոլոգիապես ավելի մաքուր լինելու մասին:
- **ISSD** - «Այ Էս Էս Դի» Համայնքների կայուն զարգացման նորարարական լուծումներ»:
- **LED լամպ** կիսահաղորդչային լույսի աղբյուր: Էկոլոգիապես առավել մաքուր էլեկտրական լամպ է:
- **NPCA** - Ազգային պարկերի պահպանման ասոցիացիա:
- **NRDC** - Բնական ռեսուրսների պաշտպանության խորհուրդ:

- **PET տիպի պլաստիկը** պլաստիկի տեսակ է, որն օգտագործվում է օրինակ ջրի շշերի արտադրության մեջ:
- **WWF-ը** (Բնության համաշխարհային հինադրամ) բնապահպանական խնդիրների ուղղվածությամբ աշխատող միջազգային կազմակերպություն է: